


Ս. ՓՐԿԻՉ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐԻ



ARMENIAN CHURCH OF OUR SAVIOUR

87 SALISBURY STREET
WORCESTER 9, MASS.

DIAL PL 6-2931

ԱՏԵՆԱՔՐՈՒԹԻՒՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ժողովը տեղի ունեցաւ Ցուն-
վար 23-ին, Հինգշաբթի երեկոյ ժամը 8.30-ին եկեղեցւոյ սրահին մէջ, ներկայութեամբ
40 երկսեռ անդամներու բազմութեան, որ հետզհետէ 50-ի բարձրացաւ:

Հոգ. Տ. Միւռոն Մ. Վրդ. Կրճիկեանի աղօթքով ժողովը բացուելէ յետոյ, Մխա-
կան Խորհուրդի ատենապետ Պրն. Ճորճ Հերոսեան, նախքան Տարեկան Մխական Ժողովի օ-
րակարգի անցնիլը, առաջարկ բերաւ որ դիւանի համար ատենապետի եւ ատենադպրի ընտ-
րութիւն կատարուի: Առ այս ժողովականներէն առաջարկուեցաւ եւ ընդհանուրի միաձայն
հաւանութեամբ ատենապետ ընտրուեցաւ Պրն. Հէրի Սողիկեան, իսկ ատենադպիր Պրն. Մա-
նասէ Ճարտարեան: Ատենապետ Պրն. Հէրի Սողիկեան, դիւանի կողմէ շնորհակալութիւն
յայտնելէ յետոյ, ընթացք տուաւ օրակարգի հարցերուն, ըստ հետեւեալին:

Մխական Խորհուրդի ատենադպիր Պրն. Թորգոմ Խուլօեան կարգաց նախորդ Անդամա-
կան Ժողովի արձանագրութիւնը, որ նոյնութեամբ վաւերացուեցաւ:

Ընտրողական Յանձնախումբի ատենապետ Պրն. Բարգէն Անսպիկեան, ծխական խորհուր-
դի հին եւ նոր թեկնածուներուն բարեմասնութիւնները տալով, զանոնք ծանօթացուց
ներկաներուն:

Հոգ. Տ. Միւռոն Մ. Վրդ. Կրճիկեան արտասանեց հոգւոց, 1963 տարւոյ ընթացքին
յաւէտ բաժնուող անդամոց հոգւոյն համար, որմէ յետոյ կարգաց 3-4 ամիսներու ընթաց-
քին կատարած իր գործունէութեան տեղեկագիրը, որ գնահատուեցաւ յոտնկայս ծափահա-
րութեամբ:

Մխական Խորհուրդի ատենադպիր Պրն. Թորգոմ Խուլօեան կարգաց ծխական խորհուրդի
վարչական տարեկան տեղեկագիրը, իսկ զանձապահ Պրն. Ճան Թորոմանեան տարեկան ելքի
եւ մուտքի հաշիւները ներկայացուց, եւ մի առ մի հարցումներուն պատասխանելով գոհ
թողուց ներկաները:

Պրն. Միւնի Խաչատուրեան յայտնեց, թէ Վերստուգիչ Յանձնախումբը ծխական խոր-
հուրդի տարեկան ելքի եւ մուտքի հաշուեկշիռը քննած եւ ճիշտ գտած է, որմէ յետոյ
ծխական խորհուրդի նիւթական եւ բարոյական համարատուութիւնը գնահատուեցաւ ծափա-
հարութեամբ, որ արձանագրութեան մաս կը կազմէ:

1964 տարւոյ պիտոնէի մասին թեր ու դէմ կարծիքներու փոխանակումէն յետոյ,
30,285.00 տոլար նախատեսութեան գումարը ընդունուեցաւ բոլորին միաձայն հաւա-
նութեամբ:

Մշակութային Տան Շինութեան Յանձնախումբի կողմէ տրուած բացատրութիւնները
լսուելէ ետք, որոշուեցաւ որ յաջորդ Անդամական Ժողովին աւելի լայն բացատրութիւն-
ներ տրուին:

Կարգացուեցան Եկեղեցասէր Տարէց եւ Երիտասարդ Տիկնանց Միութեանց, Հայ Դպ-
րոցի, Կիրակօրեայ Վարժարանի, Արանց Ակումբի, Մեծ ու Փոքր էյ-Սի-Ուայ-Օ-էյ-Ի,
Դպրաց Դասի տեղեկագիրերը, որոնք գնահատուեցան ծափահարութեամբ: Նոյն ատեն որոշ-
ուեցաւ որ եկեղեցւոյ ենթակայ մարմիններու վարչութեանց անդամները անձամբ ներկայ
ըլլան Տարեկան Մխական Ժողովներուն, ի պահանջել հարկին իրենց գործունէութեանց
մասին աւելի լայն բացատրութիւններ տալու համար:

Ժողովին առաջին նիստը փակուեցաւ ժամը 10.30-ին, ատենագրութիւնը կարգացուելէ
եւ վաւերացուելէ յետոյ, հայր սուրբին տէրունական աղօթքով, իսկ քուէարկութիւնը,
որ կը նկատուի երկրորդ նիստ, տեղի ունեցաւ 1964 Ցունուար 26-ին, Կիրակի առաւօտ
ժամը 10-էն մինչեւ մէկը: